ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 30.07.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/87

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ (այսուհետ՝ նաև բողոքներ քննող անձը) քննելով «ՌԱՋ-ՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից 09.07.2018թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. **«ՌԱՋ-ՇԻՆ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

«ՌԱՋ-ՇԻՆ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 09.07.2018թ. ներկայացրել է բողոք, որով հայտնել է հետևյալը.

«Վեճի առարկան.

Գավառի բազմաբնակարան բնակելի շենքեր տանող աստիճանների կապիտալ վերանորոգման աշխատանքների ձեռքբերման համար կազմակերպվել է ԳՄԳՀ-ԳՀԱՇՁԲ-18/9 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Բողոքի նկարագրությունը և պայմանագիր կնքելու մասին որոշման բողոքարկումը. Գավառի քաղաքապետարանը 2018 թվականի հունիսի 19-ին հայտարարել էր ԳՄԳՀ-ԳՀԱՇՁԲ-18/9 ծածկագրով Գավառի բազմաբնակարան բնակելի շենքեր տանող

աստիճանների կապիտալ վերանորոգման աշխատանքների ձեռքբերման գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ՌԱԶ-ՇԻՆ» ՍՊԸ-ն, արդյունքում, «ՌԱԶ-ՇԻՆ» ՍՊԸ-ն առաջարկել էր նվազագույն գին, սակայն ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.06.2018թ.-ի ժամը 12:00-ի հայտերի բացման նիստի արձանագրության 2.1 կետի համաձայն՝ հանձնաժողովը որոշել էր, որ «ՌԱԶ-ՇԻՆ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը չի համապատասխանում հրավերով սահմանված՝ հայտերի կազմման ներկայացման և ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին, չնշելով՝ թե հայտի որ հավելվածում է արձանագրվել անհամապատասխանությունը հրավերի պահանջների նկատմամբ, այսինքն, արձանագրությամբ չի ներկայացվել անհամապատասխանության որևէ նկարագրական մաս, ըստ որի հանձնաժողովը անհասկանալի պատճառով մերժել է «ՌԱԶ-ՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտը: Պետք է նշեմ նաև, որ օրենսդրությունը սահմանում է դեպքեր, երբ հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Այս դեպքում «ՌԱԶ-ՇԻՆ» ՍՊԸ-ի գնային առաջարկը ներկայացված է հրավերի պահանջներին համապատասխան, իսկ մնացած մյուս դեպքերում հայտում անհամապատասխանություն հայտնաբերելու դեպքում գնահատող հանձնաժողովը պետք է մեկ աշխատանքային օրով կասեցներ նիստը և մասնակցին տար մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկելու հնարավորություն, ինչը ևս գնահատող հանձնաժողովը չի կատարել՝ խախտելով օրենսդրության պահանջները:

Բողոքի փաստացի և իրավական հիմքերը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ Կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 40-րդ 4-րդ ենթակետի համաձայն՝

հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը, կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգ 40-րդ 4-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին:

Կարգ 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Այսպիսով, փաստելով վերոնշյալ իրավական հանգամանքները՝ գտնում եմ, որ ԳՄԳՀ-ԳՀԱՇՁԲ-18/9 ծածկագրով գնանշման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը գործել է ոչ իրավաչափ՝ մերժելով «ՌԱԶ-ՇԻՆ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը, իսկ «Թիվ 28 ՇՄՇ» ԲԲԸ-ին՝ առաջին տեղ զբաղեցրած, այնուհետև ընտրված մասնակից ճանաչելով, արդյունքում խախտելով Գնումների մասին ՀՀ օրենսդրությունը:

Հավի առնելով վերոնշյալը՝ խնդրում եմ.

1. Պարտավորեցնել ԳՄԳՀ-ԳՀԱՇՁԲ-18/9 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 26.06.2018թ.-ի ժամը 12:00-ի հայտերի բացման նիստի 2.1 կետի հիման վրա «ՌԱԶ-ՇԻՆ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը հրավերի պահանջներին չհամապատասխանելու վերաբերյալ կայացված հանձնաժողով որոշումը:

2. Պարտավորեցնել ԳՄԳՀ-ԳՀԱՇՁԲ-18/9 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ դադարեցնել 26.06.2018թ.-ի ժամը՝ 12:00-ի հայտերի բացման նիստի 3-րդ կետի հիման վրա «Թիվ 28 ՇՄՇ» ԲԲԸ-ին՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին հանձնաժողովի կայացված որոշումը:

3. Պարտավորեցնել ԳՄԳՀ-ԳՀԱՇՁԲ-18/9 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ եթե գնահատման արդյունքում «ՌԱԶ-ՇԻՆ» ՍՊԸ-ի հայտում արձանագրվեն անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ գնային առաջարկը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնի նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնի «ՌԱԶ-ՇԻՆ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

4. Պարտավորեցնել դադարեցնելու գնահատող հանձնաժողովի՝ 04.07.2018թ.-ին gnumner.am կայքում հրապարակված ԳՄԳՀ-ԳՀԱՇՁԲ-18/9 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը»:

Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր «ՌԱԶ-ՇԻՆ» ՍՊԸ-ի տնօրեն Իշխան Ավագյանը:

2. <u>Գավառի քաղաքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասով՝ Բողոքներ քննող անձը դիմել է Գավառի քաղաքապետարանին՝ խնդրելով բողոքի վերաբերյալ որոշում կայացնելու նպատակով, նույն հոդվածով սահմանված ժամկետում Բողոքներ քննող անձին տրամադրել գրավոր դիրքորոշում, սակայն վերջինիս կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

Պատվիրատուն պատշաճ ծանուցվել է Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն չի ապահովել իր լիազորված ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ԳԲԽ-ԷՍ-2018/87 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է «ՌԱԶ-ՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից 09.07.2018թ. և կից փաստաթղթերը, «ԳՄԳՀ-ԳՀԱՇՁԲ-18/9» ծածկագրով գնանշման հարցման հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ԳՄԳՀ-ԳՀԱՇՁԲ-18/9» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 26.06.2018թ. նիստի թիվ 2 և 03.07.2018թ. նիստի թիվ 3 արձանագրությունները, «ՌԱԶ-ՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգին ներկայացված հայտի պատճենը.

Գավառի քաղաքապետարանի կարիքների համար Գավառի բազմաբնակարան բնակելի շենքեր տանող աստիճանների կապիտալ վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԳՄԳՀ-ԳՀԱՇՁԲ-18/9» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (այսուհետ՝ նաև Ընթացակարգ) 25.06.2018թ. ի թիվս այլ մասնակիցների մասնակցության հայտ է ներկայացրել «ՌԱԶ-ՇԻՆ» ՍՊԸ-ն:

Հանձնաժողովի 26.06.2018թ. նիստի թիվ 2 արձանագրության՝

-2-րդ կետի համաձայն՝ «ՌԱԶ-ՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը կազմել է 3,480,000 ՀՀ դրամ, որը Ընթացակարգի շրջանակներում ներկայացված գնային առաջարկներից եղել է նվազագույնը:

-2.1 կետի համաձայն՝ «ՌԱԶ-ՇԻՆ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը չի համապատասխանում Հրավերով սահմանված՝ հայտերի կազմման, ներկայացման և ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին:

-3-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Թիվ 28 ՇՄՇ» ԲԲԸ-ին:

Հանձնաժողովը 03.07.2018թ. նիստի թիվ 3 արձանագրության 1-ին կետով որոշել է «Թիվ 28 ՇՄՇ» ԲԲԸ-ին ճանաչել ընտրված մասնակից:

Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստի ժամանակ «ՌԱԶ-ՇԻՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը հայտնեց, որ «ՌԱԶ-ՇԻՆ» ՍՊԸ-ն Ընթացակարգի շրջանակներում առաջարկել է նվազագույն գին, սակայն գնահատող հանձնաժողովի 26.06.2018թ.-ի հայտերի բացման նիստում հանձնաժողովը որոշել է, որ «ՌԱԶ-ՇԻՆ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը չի համապատասխանում հրավերով սահմանված՝ հայտերի կազմման ներկայացման և ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին, չնշելով՝ թե հայտի կոնկրետ որ հավելվածին է վերաբերում հայտնաբերված

անհամապատասխանությունը: Բողոքաբերը նշեց նաև, որ Հանձնաժողովի կողմից չի տրամադրվել Կարգի 41-րդ կետով նախատեսված՝ արձանագրված անհամապատասխանությունը շտկելու մեկ աշխատանքային օրյա ժամկետը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝

- 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:
- 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:
- 42-րդ կետի համաձայն՝ եթե նույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

«ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-4/18» ծածկագրով գնանշման հարցման հրավերի՝

- 7.2 կետի համաձայն՝ հայտերը գնահատվում են նույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում նույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:
- 7.9 կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ գնային առաջարկը

ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

• 7.10 կետի համաձայն՝ եթե նույն հրավերի 7.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք)՝ 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են նույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում նույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Այսպիսով, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ

- «ՌԱԶ-ՇԻՆ» ՍՊԸ-ի հայտի գնային առաջարկը կազմել է 3,480,000 ՀՀ դրամ, որը Ընթացակարգի շրջանակներում ներկայացված գնային առաջարկներից եղել է նվազագույնը, սակայն «ՌԱԶ-ՇԻՆ» ՍՊԸ-ի հայտը Հանձնաժողովի կողմից մերժվել է՝ հայտերի կազմման, ներկայացման և ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին չհամապատասխանելու հիմնավորմամբ:

- Հանձնաժողովի կողմից չի մատնանշվել հայտում հայտնաբերված կոնկրետ անհամապատասխանությունը, ինչպես նաև չի նշվել «ՌԱԶ-ՇԻՆ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը մերժելու որևէ իրավական հիմք:

- Հանձնաժողովի կողմից Ընկերությանը չի տրամադրվել Կարգի 41-րդ կետով նախատեսված՝ արձանագրված անհամապատասխանությունը շտկելու մեկ աշխատանքային օրյա ժամկետը:

Վերոգրյալով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ Հանձնաժողովը՝ Ընկերության հայտը անբավարար գնահատելով և միևնույն ժամանակ չնշելով հրավերի պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանությունները, ինչպես նաև չառաջարկելով մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված

անհամապատասխանությունը՝ գործել է ոչ իրավաչափ՝ խախտելով Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով և Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «ՌԱԶ-ՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից 09.07.2018թ. ներկայացրած բողոքը բավարարել:

2. Պարտավորեցնել «ԳՄԳՀ-ԳՀԱՇՁԲ-18/9» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ ընդունել 26.06.2018թ. ժամը 12:00-ի հայտերի բացման նիստի 2.1 կետի հիման վրա «ՌԱԶ-ՇԻՆ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը հրավերի պահանջներին չհամապատասխանելու վերաբերյալ հանձնաժողովի կայացված որոշումը դադարեցնելու մասին համապատասխան որոշում:

3. Պարտավորեցնել «ԳՄԳՀ-ԳՀԱՇՁԲ-18/9» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ ընդունել 26.06.2018թ.-ի ժամը 12:00-ի հայտերի բացման նիստի 3-րդ կետի հիման վրա «Թիվ 28 ՇՄՇ» ԲԲԸ-ին՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին հանձնաժողովի կայացված որոշումը դադարեցնելու մասին համապատասխան որոշում :

4. Պարտավորեցնել «ԳՄԳՀ-ԳՀԱՇՁԲ-18/9» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ եթե գնահատման արդյունքում «ՌԱԶ-ՇԻՆ» ՍՊԸ-ի հայտում արձանագրվեն անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ գնային առաջարկը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ընդունել՝ նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու, «ՌԱԶ-ՇԻՆ» ՍՊԸ-ին դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնելու և վերջինիս մինչև կասեցման ժամկետի ավարտը անհամապատասխանությունը շտկել առաջարկելու մասին համապատասխան որոշում:

5. Պարտավորեցնել գնահատող հանձնաժողովին՝ ընդունել 04.07.2018թ.-ին gnumner.am կայքում հրապարակված ԳՄԳՀ-ԳՀԱՇՁԲ-18/9 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը դադարեցնելու մասին համապատասխան որոշում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ